

ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ



ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

ԳԱՐԳԱՌ, ՊՈՒՇԿԻՆՈ, ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ,
ՎԱՐԴԱԲԼՈՒՐ և ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

ԼՈՒԻ 2015

Բովանդակություն

Վերլուծություն իրականացնող կառույց	3
Համայնքներ	4
Համայնքների վերաբերյալ տեղեկություններ	5
Դիտարկվող գյուղերի մրցակցային առավելությունները	6
Համայնքների խմբի տնտեսության նկարագիրը.....	7
Ա. Անասնապահություն	7
Կաթի իրացումը.....	9
Մսի իրացումը.....	10
Նախաձեռնություններ կաթի և մսի արտադրության վերաբերյալ	12
Բ. Հողագործություն	14
Ցորենի մշակում.....	15
Կարտոֆիլագործություն.....	17
Նախաձեռնություններ հողագործության ոլորտում	18
Դ. Գյուղական տուրիզմ	19
Առաջարկություններ գյուղական տուրիզմի ոլորտում	19
Ենթակառուցվածքային ծրագրեր	20

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

Համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2015 թվականի փետրվար ամսին: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արևմտական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.

- ⇒ գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի ձևավորում,
- ⇒ համայնքների տնտեսական քարտեզագրում- առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում,
- ⇒ առկա արժեզրոյանների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում,
- ⇒ աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար,
- ⇒ արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում,
- ⇒ նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում,
- ⇒ համայնքների ակտիվ դերակատարներին ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում:

Համայնքներ

Գարգառ: համայնքը հիմնադրվել է 1790-ական թվականներին: Համայնքի հին անվանումը Գյառոզյառ է, որը նշանակում է հպարտ-հպարտ: Գարգառի ժողովրդի մեծ մասը 1915թ. ջարդերի ժամանակ գաղթել է Արևմտյան Հայաստանից, հատկապես Մշո դաշտից: 1801 թվականին ցարական Ռուսաստանը հատուկ հրովարտակով պարսիկներից գրավեց մեր Լոռին, այդ ժամանակ շատ ընտանիքներ, թողնելով իրենց բնակավայրերը, եկան Լոռվա գյուղերը՝ դառնալով նրանց մշտական բնակիչները: Գարգառը գտնվում է ծովի մակարդակից 1400-1500 մ բարձրության վրա: Հեռավորությունը Ստեփանավան քաղաքից 10 կմ է, իսկ մարզկենտրոնից 26 կմ:

Պուշկին: Գյուղը գտնվում է Բագումի և Վիրահայոց լեռնաշղթաների միջև, Գարգառ գետի աջ ափին, Ստեփանավանից 14 կմ հարավ-արևելք, ծովի մակերևույթից 1522 մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից 25 կմ է: Պուշկինոն ներկայիս անունն ստացել է 1870թ.-ին ի պատիվ ռուս հանճարեղ բանաստեղծ Ա.Ս.Պուշկինի:

Գյուլագարակ: Համայնքը գտնվում է Ստեփանավան քաղաքից 8 կմ հարավ-արևելք, Ձորագետի աջակողմյան Գարգառ վտակի ձախ ափին, հեռավորությունը մարզկենտրոնից 28 կմ:

Գյուլագարակ գյուղը հիմնվել է 1750թ.-ին, գտնվում է ծովի մակարդակից 1400 մ բարձրության վրա:

Գյուլագարակից 3կմ հարավ գտնվում է «Սոճուտ» մանկական առողջարանը և «Դենդրոպարկ»-ը:

Գյուղից 2կմ դեպի հարավ գտնվում է Տորմակաղուռ գյուղատեղին և VI դ. եկեղեցու ավերակները:

Վարդաբլուր: Այս գյուղի պատմությունը սկսվում է 18-րդ դարի 60-ական թվականներից: Այն գտնվում է Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանում՝ մարզկենտրոնից 31 կմ հեռավորության վրա: Անվան ծագումը կապվում է վարդագլխների առատության հետ: Գյուղի վարչական տարածքում պահպանվել է VI-րդ դարի Ջգրաշեն միանավ թաղածածկ եկեղեցին: Ծովի մարերեւույթից 1320 մ բարձրության վրա է:

Կուրթան: Համայնքը գտնվում է Ստեփանավան քաղաքից 18 կմ հարավ-արևելք: Հեռավորությունը մարզկենտրոնից 36 կմ է: Հիմնադրվել է 1730-1740-ական թվականներին: Գյուղում և շրջակայքում պահպանվել են եկեղեցի, Հնավանք համալիրը, խաչքարեր, մատուռներ, կամուրջներ եւ այլ շինության մնացորդներ: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 981-1350 մ բարձրության վրա:

Համայնքների վերաբերյալ տեղեկություններ

	Գարգառ	Պուշկինո	Գյուլագարակ	Վարդաբլուր	Կուրթան
Բնակչություն	1617	337	2599	1408	2019
Տնային տնտեսություններ	465	129	755	419	573
Վարելահող	647	351	894	819	920
որից՝ ջրովի	-	-	-	-	-
Ցանվող կուլտուրաներ (հա)	146	20	720	813	700
Խոտհարք	128	551	173	146	114
Արոտավայր	976	508	153	250	30
Խոշոր եղջերավոր անասուններ	750	600	2500	2400	2000
որից՝ կով	400	350	1400	1300	1050
Մանր եղջերավորներ	227	160	1211	438	272
Կոմբայններ	4	-	2	7	1-
Տրակտորներ	23	6	20	51	57
Բեռնատարներ	15	6	18	14	39

Դիտարկվող գյուղերի մրցակցային առավելությունները

Ստորև հինգ համայնքների մրցակցային առավելություններն են:

- Տարածքով անցնող միջպետական մայրուղին բարենպաստ հնարավորություն է ստեղծում արտադրված գյուղմթերքների իրացման համար:
- Տարածաշրջանն ունի գյուղական տուրիզմի զարգացման մեծ պոտենցիալ, քանի որ համայնքներին շատ մոտ է գտնվում դենդրոպարկը և «սոճուտ» հանգստյան համալիրը: Ներկայումս համայնքներում առկա են 10 B & B – ներ:
- Տարածաշրջանում առկա են պանրի արտադրության փոքր ձեռնարկություններ, որոնք կարող են հաջողված նախադեպ հանդիսանալ այս գաղափարի կրկնության համար :
- Հողերը նպաստավոր են ցորենի աճեցման համար:
- Տարածաշրջանի բնակչությունը հակված է համատեղ գործողությունների, փոփոխությունների, առկա են համագործակցության բազմաթիվ տարբերակներ:

Համայնքների խմբի տնտեսության նկարագիրը

Ա. Անասնապահություն

Ներկայացվող հինգ համայնքների տնտեսության մեջ գերակա է անասնապահությունը: Ոռոգման համակարգերի ոչնչացման և թալանի հետևանքում մարդիկ ստիպված աստիճանաբար ավելացրել են անասունների գլխաքանակը: Անասնապահության մեջ նշված համայնքներից առաջատար են Գյուլագարակ և Կուրթան համայնքները, որոնք պահում են նաև Հոլշտեյն, Շվից, Ջերսի տեսակի և խառնածին կովեր:

Անասնապահությունը ավադական ճյուղ է այս գյուղերի համար: Համայնքների բնակչության գրեթե 60 – 80 %-ը (կախված է նրանից, թե ո՞ր համայնքի մասին է խոսքը) զբաղվում է անասնապահությամբ: Տնտեսությունների մեծամասնությունն ունի մեկ - երկու գլուխ կով, որի օգնությամբ հոգում է սեփական ընտանիքի կարիքը: Կան նաև մեծ անասնապահական տնտեսություններ:

Ստորև ներկայացվում է անասունների բաշխվածությունն ըստ անասնապահական տնտեսությունների մեծության:

Աղյուսակ 1. Անասնապահական տնտեսությունների չափերը

Քանակ / հոգի					
Ֆերմերներ (Խոշոր եղջերավոր անասնապահություն)	Գարգառ	Պուշկինո	Գյուլագարակ	Վարդաբլուր	Կուրթան
Խոշոր (25 և ավել գլուխ)	2	7	25	4	2
Միջին (10 -25 գլուխ)	2	7	40	77	20
Փոքր (մինչև 10 գլուխ)	130	40	250	159	300

Անասնապահական տնտեսությունները անասունները պահում են հիմնականում գյուղում: Տարածաշրջանում անասունների հիմնական ցեղատեսակը "Կովկասյան գորշն" է: Օրինակելի պահվածքի դեպքում այս ցեղատեսակի կաթնատվությունը կարող է հասնել մինչև տարեկան 3500-4000լ. ծավալի: Ցավոք, ամռան երկու- երեք ամիսներից բացի, անասունները թերսնված են, պայմանավորված խոտի որակով և լրացուցիչ կերի բացակայությամբ, ինչն էլ կրճատում է կաթնատվությունը: Բացի այդ, կովերի ծինը հիմնականում հունվար- մարտ ամիսներին է:

Այժմ բազմաթիվ գյուղացիական տնտեսություններ ցանկանում են ավելացնել անասունների գլխաքանակը, սակայն հասանելի ֆինանսավորում չկա, հատկապես՝ տասից ավել անասնագլխաքանակ ունեցող տնտեսությունների զարգացման համար: Պետության կողմից սուբսիդավորվող վարկերը առավելապես 2-5 անասուն ունեցող տնտեսությունների համար են (մինչև մեկ միլիոն դրամ) և օգտվում են սահմանված քանակի տնտեսություններ: Ավելի մեծ տնտեսություններն այդ գումարով զարգանալ չեն կարող, իսկ գյուղի զարգացման համար միջին ֆերմերային տնտեսությունների կայացումը հաջողության էական գործոն է:

Նշված բոլոր համայնքներում առկա է հեռագնա արոտի ճանապարհի բարեկարգման խնդիր: Հեռագնա արոտ չեն բարձրանում, քանի որ այն գյուղերից 10 - 15 կիլոմետր հեռավորության վրա է, իսկ ճանապարհից մի հատված (մոտ 5 կմ) արդեն մի քանի տարի է, ինչ անանցանելի է դարձել: Ֆերմերները պնդում են, որ ճանապարհի այդ հատվածի բարեկարգման դեպքում ամեն համայնքից մոտ 5 – 15 ֆերմեր կբարձրանան հեռագնա արոտներ, և համայնքներում կաճի անասնապահությունը: Հեռագնա արոտ չբարձրանալու ևս մի պատճառ է հանդիսանում գայլերի առկայությունը, որոնք միայն այս տարի վնաս են հասցրել մոտ 100 գլուխ անասունների: Այդ հարցի լուծումը նրանք տեսնում են ցանկապատերի կառուցման մեջ: Հեռագնա արոտներում անհրաժեշտ է ջրագծի վերանորոգում, խմոցների տեղադրում և էլեկտրաֆիկացում (հոսանքի մոտակա աղբյուրի հեռավորությունը 3 կմ է): Մարդկանց կացարանները ժամանակավոր են և անհարմար, այդ պատճառով անհրաժեշտ է հիմնավոր լուծում տալ այս հարցին՝ կացարանների կառուցման ճանապարհով:

Ստորև աղյուսակում ներկայացված է համայնքների անասնագլխաքանակը:

Աղյուսակ 2. Անասունների գլխաքանակը

	Գարգառ	Պուշկին	Գյուլագարակ	Վարդաբլուր	Կուրթան
Խոշոր եղջերավոր անասուններ	750	600	2500	2400	2000
որից՝ կով	400	350	1400	1300	1050
Մանր եղջերավորներ	250	200	1300	500	300

Անասնապահության արդյունքը միան ու կաթն է:

Կաթի իրացումը

Մեկ կովի միջին կաթնատվությունը տարեկան մոտ 1600 - 2500 լիտր է, կախված անասունների սորտերից : Կաթի մի մասով գյուղացիները պանիր են արտադրում, մյուս մասը հանձնում են մթերողներին: Կաթի մեկ լիտրի արժեքը Վարդաբլուր համայնքում տատանվում է 170 – 180 դրամի սահմաններում, իսկ մնացած համայնքներում 160 դրամ է: Կաթի յուղայնության համար մարդիկ լրացուցիչ վարձատրվում են: Վարձատրությունը գործում է 3,6 % - ից մինչև 4 % կաթի յուղայնության դեպքում: Կաթի արտադրության մեջ նոր տեխնոլոգիաներ հիմնականում չեն կիրառվում: Պանրի արտադրության մեջ հիմնականում ավանդական տեխնոլոգիաներ են կիրառվում, և մեծամասամբ արտադրում են սեփական կարիքների համար: Ներկայումս գործում են և գործարկման փուլում են գտնվում նաև նորաստեղծ պանրի փոքր արտադրամասեր, որոնք ունեն տեխնոլոգիական և ֆինանսական աջակցման կարիք:

Կաթի արտադրության հետ կապված շահութաբերության հաշվարկը ներկայացված է ստորև .

Աղյուսակ 3. Կաթի արտադրության շահութաբերության հաշվարկը 10 կովի դեպքում (երբ կովերը խաչասերված նոր ցեղատեսակի են):

1	Ստացվող կաթ	2 500 լիտր x 10 = 25 000 լիտր
1.1	Կաթի վաճառքից եկամուտ	25 000 x 160 = 4 000 000 դրամ
2	Հորթ	8 հատ
2.1	Հորթի վաճառք	40 000 դրամ x 8 = 320 000 դրամ
3	Ընդամենը եկամուտ (1 + 2)	= 4 320 000 դրամ
4	Ծախսեր	= 1 146 000 դրամ ¹
5	Շահույթ	= 3 144 000 դրամ

Աղյուսակ 4. Կաթի արտադրության շահութաբերության հաշվարկը 10 կովի դեպքում (երբ կովերը կովկասյան գորշ ցեղատեսակի են):

1	Ստացվող կաթ	1 600 լիտր x 10 = 16 000 լիտր
1.1	Կաթի վաճառքից եկամուտ	16 000 x 160 = 2 560 000 դրամ
2	Հորթ	8 հատ
2.1	Հորթի վաճառք	40 000 դրամ x 8 = 320 000 դրամ
3	Ընդամենը եկամուտ (1 + 2)	= 2 880 000 դրամ
4	Ծախսեր	= 926 000 դրամ
5	Շահույթ	= 1 954 000 դրամ

Մսի իրացումը

Մսի իրացումը համայնքում գերխնդիր է: Տնային տնտեսություններն հիմնականում կախման մեջ են մթերողներից, ովքեր մեծամասամբ այլ համայնքներից են: Մարդիկ այդ խնդիրը լուծելու համար սպանդանոց սարքելու նպատակ ունեն:

¹ Ֆերմերի անմիջական մասնակցությունը խոտհարքի գործընթացին, եթե առկա է սեփական գյուղ. մեքենա, կրիին և այլ գործողությունների մոտ 40%-ով նվազեցնում է ծախսը:

Ստորև աղյուսակում ներկայացված է մսի արտադրության ծախսերի և եկամտի համեմատական հաշվարկը:

Աղյուսակ 5. Մսի արտադրության ծախսերի և եկամտի հաշվարկ տավարի և ոչխարի մասով:

<i>1</i>	<i>Անվանումը</i>	<i>Բովոյող հորթեր</i>	<i>Ոչխար</i>
<i>2</i>	Օպտիմալ տնտեսություն	20 հորթ	100 ոչխար
<i>3</i>	Ստացվող արդյունքը միավոր կենդանուց	200 կգ միս երկու տարում	1 գառ (12 - 15 կգ)
<i>4</i>	Ընդհանուր արդյունքը	4000 կգ միս	100 գառ
<i>5</i>	Մեկ միավորի մեծածախ գինը	2000 դրամ մեկ կիլոգրամ միսը	1 գառը 40 000
<i>6</i>	ստացվող եկամուտը ('4'x'5')	8 000 000	4 000 000
<i>7</i>	անհրաժեշտ ծախսերը	3 560 000	1 200 000
<i>8</i>	Շահույթ	1 տարվա համար 2 220 000	2 800 000

Տավարի մսի արտադրությունը տարածաշրջանում արդյունավետ է, եթե տնտեսությունը ավելի քան վեց գլուխ ցուլիկ է բուծում, ինչպես նաև արտամտուրային շրջանում ցուլիկները պահում է հեռագնա արտոներում: Ընդհանուր առմամբ, մսի արտադրության ծավալները վերջին երեք տարիներին աճում են և՛ տավարաբուծության, և՛ ոչխարաբուծության մեջ՝ պայմանավորված ներդրված գումարի արագ վերադարձով (գարնանը գնում են ցուլիկները, ուղարկում հեռագնա արտոներ, իսկ աշնանն արդեն մորթում են և վաճառում):

Համայնքում ոչխարաբուծությունը նույնպես զարգացած է (մասամբ պահում են նաև այծեր): Առկա է 2300 – ից ավելի գլուխ ոչխար և այծ, որոնց կաթից ստանում են պանիր: Հիմնականում պանրի իրացման խնդիր չունեն: Կենդանիների իրացումից նույնպես դժգոհ չեն: Առկա է բրդի իրացման խնդիր, ինչպես Հայաստանի մնացած համայնքներում: Ֆերմերները ժամանակին բուրդը վաճառել են Մալաթիայի շուկայի վերավաճառողներին, որտեղ իրենց կարծիքով իրենց քիչ են վճարել:

Նախաձեռնություններ կաթի և մսի արտադրության վերաբերյալ

Անասնապահության զարգացման, ինչպես նաև կաթի ու մսի վերամշակման ուղղությամբ տարածաշրջանում անհրաժեշտ են հետևյալ գործողությունները:

- *Անասունների պահքի և խոտի մատակարարման ավտոմատացում:*
- *Գոմային պայմանների բարելավում, կառուցում, գոմադրի հեռացման մեքենայացում:*
- *Ժամանակակից գյուղտեխնիկայի ապահովում, լիզինգային եղանակով իրացում գյուղացուն: Հատկապես՝ խոտհնձիչներ, խոտի հակավորման սարքավորումներ:*
- *Կթի սարքավորումների լայնատարած կիրառում:*
- *Օպտիմալ ֆերմերային տնտեսությունների (10 և ավելի գլխաքանակ անասունով) ֆինանսավորման մեխանիզմի ներդրում: Չորս միլիոն դրամից ավելի և տարեկան տասը տոկոս տոկոսադրույթից պակաս պայմաններով վարկերը կարող են խթանել նկարագրված թիրախ տնտեսությունների զարգացումը:*
- *Անասունների արհեստական սերմնավորման համակարգի լայնատարած ներդրում:*
- *Անասունների լիակատար կերակրման նոր համակարգի ներդրում և գյուղացիներին ուսուցում՝ լիակատար կերակրման առավելությունների մասին: Անասնակերի արտադրության սարքավորումների ապահովում, այս ոլորտում սկսնակ գործարարների խրախուսում, նաև՝ ֆինանսական աջակցության ծրագրերով:*
- *Կերային մշակաբույսերի մշակման աջակցություն՝ սերմացուի, տեխնիկայի, ինչպես նաև նոր մշակաբույսերի ներդրման ուղղությամբ:*
- *Պանրի արտադրության սանիտարա - հիգիենիկ պայմանների բարելավում: Տնական պայմաններում պանրի արտադրության համար շինությունները, պահեստները, սարքավորումները վերափոխման կարիք ունեն, ինչպես նաև կարիք կա պանրի արտադրության պայմանների և տեխնոլոգիաների վերաբերյալ դասընթացների:*

- Փաթեթավորումն ու տարածաշրջանային բրենդի ստեղծումը կարող են էապես խթանել պանիրն ավելի թանկ և նպատակային վաճառելու գործընթացը:
- Նորովի պանրի արտադրություն կազմակերպող անձանց տրամադրել ֆինանսական աջակցություն էժան տոկոսադրույքով վարկերի տեսքով:
- Տարածաշրջանում համապատասխան սարքավորումներով հագեցած գոնե մեկ սպանդանոցի հիմնում:
- Կարող են կից գործել նաև մսի նախնական վերամշակման փոքր արտադրամասեր՝ բաստուրմայի, սուջուխի, մսի կիսաֆարրիկատների արտադրություն և այլն:

Բ. Հողագործություն

Այս տարածաշրջանում հիմնականում ցանում են ցորեն և կարտոֆիլ, քանի որ բոլոր վարելահողերն անջրդի են և հիմնականում նպաստավոր են ցորենի աճեցման համար: Համայնքում կան անձիք, ովքեր զբաղվում են ցորենի և կարտոֆիլի սերմնաբուծությամբ: Բացի դրանցից, ցանվում է նաև եգիպտացորեն, սակայն չի հասցնում հասունանալ և հիմնականում օգտագործվում է սիլոսի ստացման մեջ: Հողագործության մեջ տնտեսություններին հիմնական վնաս հասցնողը կարկուտն է: Անցած տարիներին կարկուտը վնասել է ցորենի և կարտոֆիլի մշակված դաշտերը, որտեղից հավաքել են սպասվող բերքի մոտ 20%-ը: Վարդաբույրում կա հակակարկտակայան, բայց չի բավարարում համայնքի վարելահողերին (Հոբարձի գյուղին հարող ամբողջ վարելահողերն անմշակ են մնացել կարկուտի հետևանքով): Համայնքում մեխանիզացիան հին է և թարմացման կարիք ունի:

Ֆերմերները ամեն տարի փոխում են ցանվող կուլտուրաների տեսականին, քանի որ, ինչպես իրենք են նկարագրում՝ այդ եղանակով ցանելու դեպքում մշակաբույսերի բերքատվությունները ավելի է բարձրանում:

Միայն Գարգառ համայնքում անցած տարի դոնոր կազմակերպությունների աջակցությամբ փորձնական նոր տեսակի մշակաբույսեր են ցանել, որոնց համեմատական շահութաբերության հաշվարկը ներկայացված է աղյուսակ 6 - ում:

Աղյուսակ 6. Ոչ ավանդական մշակաբույսերի բերքատվությունն ու շահութաբերությունը 1 հա հողատարածքում

	Ապրանք և գործողություններ	Բրոկկոլի	Կուրաբի	Ծներեկ
1	Մեկ սաճիլից ստացվող բերքը	300 գ	400 գ	1 - րդ տարում 40 գ / 2- րդ տարում 80 գ
2	1 կիլոգրամի արժեքը	500 դրամ	250 դրամ	1000 դրամ
3	1 հա հողատարածքի վրա ցանվող սաճիլների քանակը	70 000	70 000	70 000
4	Մեկ սաճիլի վրա կատարվող ծախսը	100 դրամ	70 դրամ	50 դրամ
5	Շահույթ	3 500 000	2 100 000	սկսած 2 – րդ տարվանից 2 100 000

Մարդիկ այս տարի նույնպես ոչ ավանդական մշակաբույսեր ցանելու միտումներ ունեն: Անցած տարվա փորձից ելնելով՝ այս տարի իրենց ցանքը կկատարեն ավելի մեծ հողակտորներում: Այս համայնքում նաև ջերմոցների հիմնման ցանկություն կա, որտեղ կարտադրեն սերմերի և սածիլներ:

Ցորենի մշակում

Ցորենի բերքատվությունը տարեկան 3 – 5 տոննա է՝ կախված եղանակային պայմաններից (հիմնականում՝ տեղումների քանակից): Տարածաշրջանում հացահատիկային կուլտուրաների աճեցման բացարձակ առաջատար են Կուրթան և Վարդաբլուր համայնքները: Երկու համայնքները ցանում են 800 հեկտար ցորեն, իսկ մնացած 3 համայնքները միասին՝ մոտ 100 հեկտար:

Ցորենը հիմնական հացահատիկային մշակաբույսն է այս տարածաշրջանի համար: Դիտարկվող հինգ գյուղերը ցորենի բերքատվությամբ չեն զիջում Հայաստանի առաջատար համայնքներին:

Տարածաշրջանիի բնակչությունը ցորենի աճեցմամբ է զբաղվում հետևյալ հիմնավորումներով՝

- հողատարածքում ցորենի բերքատվությունը մեծ է:
- Վարելահողերը անջրդի են և հարմար են հիմնականում ցորենի աճեցման համար:
- Ծախս քիչ է պահանջվում:
- Ֆիզիկական աշխատանքը քիչ է:
- Ցորենը մի կողմից հեշտ է իրացվում, մյուս կողմից՝ տնային տնտեսությունների կարիքների բավարարմանն է ուղղվում:

Ոռոգման ջրագծերն ու պոմպերը ժամանակին ավերվել ու թալանվել են, մասամբ պահպանվել են միայն անձրևային ոռոգման ցանցերը:

Ստորև ներկայացված է ցորենի եկամտաբերության հաշվարկը:

Աղյուսակ 7. Ցորենի եկամտաբերության վերլուծություն

Ապրանք և գործողություններ	Ծախսերի հաշվարկ
Վար	40 լ (1լ – 350 դրամ) վառելանյութ + 15 000 դրամ
Ցանք	10 լ վառելանյութ + 7 000 դրամ
Հողի հարթեցում	10 լ վառելանյութ + 3 000 դրամ
Ազոտական պարարտանյութ	12 000 + 10 լ վառելանյութ + 5 000 դրամ
Հունձ	30 լ վառելանյութ + 15 000 դրամ
Թունաքիմիկատներ	3000 դրամ + 10 լ վառելանյութ + 5 000 դրամ
Սերմ	300 կգ * 160 դրամ = 48 000
Այլ ծախսեր	20 000 դրամ
Ընդհանուր ծախսեր	171 500 դրամ
Իրացում	4 տ * 160 դրամ = 640 000
Շահույթ	468 500 դրամ

Հաշվարկից հետևում է, որ համայնքներն այս ոլորտում կարող են մրցել Հայաստանի առաջատար համայնքների հետ:

Կուրթան համայնքում առկա է ցորենի զտիչ սարքավորում, որի ծառայություններից օգտվելու համար մարդիկ մեկ տոննայի համար վճարում են 12 կգ ցորեն: Տեղումները խոչընդոտում են ցորենագտիչի աշխատանքին, այդ պատճառով անհրաժեշտ է ծածկի կառուցում: Համայնքապետը պատրաստ է նաև տարածք տրամադրել զտիչի համար, քանի որ ներկայիս տարածքը գտնվում է անմխիթար վիճակում:

Կարտոֆիլագործություն

Կարտոֆիլը նույնպես ավանդապես մշակվել է համայնքներում, սակայն ոռոգման ջուր չունենալու պատճառով տնտեսությունները կարտոֆիլ քիչ են ցանում: Ֆերմերները Էլիտար տեսակի սերմերի ներմուծման նպատակ ունեն, որի բերքատվությունն ավելի բարձր է: Նրանք համոզված են, որ Վարդաբլուր համայնքի սերմնաբուծարանները կկարողանան ստանալ տեղանքին ադապտացած սերմ: Հողերն ունեն կայունական և ֆոսֆորական պարարտանյութերի պակաս: Դրանց փոխարեն մարդիկ միշտ հողը պարարտացրել են սիլիտրայով: Այս տարի այդ պարարտանյութերից ստանալու համար ֆերմերներն արդեն դիմել են գյուղապետարաններին: Կա վարի խնդիր, որը կապված է թրթուռավոր տրակտորների թրթուռների մատչելիության ու բարձր գնի հետ (1 տրակտորի թրթուռները բաղկացած են 84 հատիկից, 1 հատիկը իր ձողով ներկայումս վաճառում են 12 000 դրամ):

Ինչպես ներկայացված է ստորև, կարտոֆիլագործությամբ զբաղվելը համայնքներում նույնպես շահավետ է:

Ապրանք և գործողություններ	Ծախսերի հաշվարկ
Վար	40 Լ (1Լ – 350 դրամ) վառելանյութ + 15 000 դրամ x 2
Ցանք	20 Լ վառելանյութ + 10 000 դրամ
Կուլտիվացիա	15 Լ վառելանյութ + 10 000 դրամ x 3
Ազոտական պարարտանյութ	12 000 + 10 Լ վառելանյութ + 5 000 դրամ
Թունաքիմիկատներ	12000 դրամ + 10 Լ վառելանյութ + 10 000 դրամ x 3
Սերմ	4000 կգ * 430 դրամ = 1 720 000
Քանդում	40 Լ վառելանյութ + 20 000 դրամ
Հավաքում	80 000 դրամ
Այլ ծախսեր և տեղափոխում	100 000 դրամ
Ընդհանուր ծախսեր	2 151 750 դրամ
Վաճառք	(20 տ * 200 դրամ)+ (10 տ * 100)= 5 000 000 դրամ

Աղյուսակ 7. Կարտոֆիլի եկամտաբերության վերլուծություն

Նախաձեռնություններ հողագործության ոլորտում

- Հողի լաբորատոր վերլուծություն և տարածաշրջանի հողային կազմին համապատասխան պարարտանյութի ձեռքբերման աջակցություն:
- Որակյալ և տարածքին համապատասխան սերմացուի մատակարարման աջակցություն:
- Տարածաշրջանի գյուղերի համար նոր կոմբայնի ձեռքբերման աջակցություն, որը կնվազեցնի բերքի կորուստը:
- Թրթուռավոր տրակտորների ձեռքբերման աջակցություն (լիզինգային տարբերակով):
 - Թրթուռների հատիկների էժան ձեռքբերման աջակցություն:
- Անասնակերի արտադրություն նախաձեռնած անձանց աջակցություն (10 % - ից նվազ վարկի տեսքով):
- Նոր մշակաբույսերի մշակման դասընթացների կազմակերպում:

Դ. Գյուղական տուրիզմ

Այս տարածաշրջանը գյուղական տուրիզմի զարգացման մեծ պոտենցիալ ունի: Այստեղ եղած դենդրոպարկը, եղևնիների անտառը, պատմամշակույթային հուշարձանները և արդեն առկա օթևանատները հրաշալի պայմաններ են ստեղծում գյուղական տուրիզմի զարգացման համար: Գարգառ համայնքում առա է նաև՝ լիճ, նավակներ և բացօթյա կացարաններ: Մարդիկ շատ են կարևորում այս համայնքներում ապրել եղևնիների փոշոտման ժամանակ, քանի որ փոշոտման սեզոնին այդտեղ գտնվելը օգտակար է մարդու առողջությանը: Կա նաև մշտական այցելուների խումբ:

Տեղի ժողովրդից մի հատված գնահատելով իրավիճակը ամառվա սեզոնին իրենց տները, կամ տներից մի հատված տրամադրում են զբոսաշրջիկների որպես օթևանատուն: Ներկայումս համայնքներում եղած օթևանատները վերանորոգման (ինչպես նաև տաք ջրի անցկացման) կարիք ունեն: Վարձակալությունը կախված է մարդկանց քանակությունից: 1 անձի վարձավճարը 2000 դրամ է: Երկարաժամկետ վարձակալության դեպքում գործում է զեղչային համակարգ:

Առաջարկություններ գյուղական տուրիզմի ոլորտում

- ❖ Օթևանատների վերանորոգման և կահավորման աջակցություն (10 % - ից ցածր վարկերի տեսքով):
- ❖ Տաք ջրի և այլ կոմունալ պայմանների բարելավման աջակցություն:
- ❖ Աջակցություն մարքեթինգի կազմակերպման հարցերում:
- ❖ Սպասարկման հետ կապված դասընթացների կազմակերպում:
- ❖ Համագործակցություն տուրօպերատորների հետ:

Ենթակառուցվածքային ծրագրեր

Ստորև ներկայացված են տարածաշրջանի տնտեսության զարգացման վրա էական ազդեցություն ունեցող փոքր ենթակառուցվածքային ծրագրերը:

- Հակակարկտակայանների հիմնում Վարդաբլուր համայնքում:
 - Ծրագրի իրականացումից կօգտվեն մոտ 30 գյուղացիական տնտեսություններ:
- Հանդ տանող ճանապարհի (երկարությունը 1 կմ) բարեկարգում Գյուլագարակ համայնքում:
 - Ծրագրի իրականացումից կօգտվեն մոտ 15 ֆերմերներ:
- Կացարանների կառուցում Գյուլագարակ համայնքի հանդում:
 - Ծրագրի իրականացումից կօգտվեն մոտ 10 հողագործներ:
- Հանդում ցանկապատների անցկացում, որոնք կպաշտպանեն գայլերի հարձակումներից (5 հատ 500 մ/ք):
 - Ծրագրի իրականացումից կօգտվեն մոտ 30 հողագործներ:
- Մոտ 200 մ երկարությամբ ջրագծի անցկացում:
 - Ծրագրի իրականացումից կօգտվեն 15 ֆերմեր և 250 գլուխ անասուն:
- Ոռոգման ջրագծի նորոգում Կուրթան համայնքում, որի երկարությունը մոտ 7 կմ է (պետք է պոմպով մղվի վերև մոտ 150 մ):
 - Ոռոգելի կղառնա մոտ 200 հա հողատարածք:
- Ցորենի գոտիների համար ծածկի կառուցում Կուրթան համայնքում:
 - Ծրագրի իրականացումից կօգտվեն տարածաշրջանի ցորեն մշակողները:
- Հանդ տանող ճանապարհի վերանորոգում Կուրթան համայնքում (գյուղապետարանի նախահաշվարկով բարեկարգման աշխատանքների համար կծախսվի մոտ 2 000 000 դրամ): Ճանապարհի երկարությունը 5 կմ է:

- Ծրագրի իրականացումից կօգտվեն նաև հարևան համայնքներից:
- Ջրագծի անցկացում հեռագնա արոտում (մոտ 100մ) և խմոցների տեղադրում (6 հատ, յուրաքանչյուրը՝ 4 մ):
 - Ծրագրի իրականացումից կօգտվի մոտ 20 ֆերմեր:
- Հանդ տանող ճանապարհի վերանորոգում Վարդաբլուր համայնքում (մոտ 4 կմ):
 - Ծրագրի իրականացումից կօգտվի մոտ 15 ֆերմեր:

Շնորհակալություն ենք հայտնում Գարգառ, Պուշկինո, Գյուլագարակ, Վարդաբլուր և Կուրթան համայնքների գյուղապետարաններին՝ հանձինս գյուղապետերի և տեղական թիմի անդամների՝ ծրագրի իրականացմանն աջակցելու համար:

